Շուշանիկ Կուրղինյան

Թե կուզեք ապրել

Գեթ հեղաշրջման այս ժամին վսեմ
Ազգային ճաղատ փառքը թողնեիք .
Եվ անհաշտ օրից դալուկ ու նսեմ,
Ամենքի կողքին նոր ուժ առնեիք:

Ի՞նչ շահ դարերով տզզալ անզգա
Նանիր ցնորքից գործած ոստայնում,
Բնական գաճաճ՝ ձևանալ հսկա,
Եվ մուրալ այնտեղ՝ ուր չեն ստանում:

Գոյության կռվում երբ կաք ու չկաք՝
Արժան չէ՞ արդյոք ջնջվել երկրից,
Գոնե ուրիշին դուք տեղի կտաք .
Ով ուզե ապրել նոր կյանքով, նորից:

Թե կուզեք ապրել, ապրել ապահով՝
Բռնեք այն ձեռքը, ով էլ որ ձեզ տա,
Նոր ուղին փշոտ՝ հարթվում է մահով,
Որ ծանր խաչը հանեն Գողգոթա . . .

1908 թ. 12 փետրվարի